«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

4 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

5 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

6 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

7 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	682	-
Ոչ նյութական ակտիվներ		867	
		1,549	-
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		-	-
Դեբիտորական պարտքեր	5	185	6
Դրամական միջոցներ	6	2,293	100
		2,478	106
Ընդամենը ակտիվներ		4,027	106
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	7	100	100
Կուտակված շահույթ/վնաս		(3,424)	6
		(3,324)	106
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ		-	-
		-	-
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ	8	4,500	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	2,851	-
Շահութահարկի գծով պարտավորություն		-	-
		7,351	-
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		4,027	106

Տնօրեն

Մենա Ավետիսյան

Հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ

Արևիկ Մխիթարյան

«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
01569467

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Իրացումից հասույթ		-	-
Վաճառքի ինքնարժեք		-	-
Համախառն շահույթ		-	-
Վարչական ծախսեր	10	(3,430)	-
Այլ ծախսեր		-	-
Գործառնական գործունեությունից վնաս		(3,430)	-
Ֆինանսական եկամուտ		-	-
Վնաս մինչև հարկերը		(3,430)	-
Շահութահարկի գծով ծախս		-	-
Տարվա վնաս		(3,430)	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո			
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ		(3,430)	-

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ/վնաս	Ընդամենը
2020թ հունվարի 1-ի դրությամբ	100	6	106
Տարվա շահույթ	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	100	6	106
Տարվա վնաս	-	(3,430)	(3,430)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(3,430)	(3,430)
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	100	(3,424)	(3,324)

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	(3,430)	-
Ճշգրտումներ՝		
Շահութահարկի գծով ծախս	-	-
Մաշվածության ծախս	266	-
Ֆինանսական եկամուտ	-	-
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	(3,164)	-
Պաշարների փոփոխություն	-	
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(179)	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	2,851	-
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(492)	-
Վճարված շահութահարկ	-	-
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(492)	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,815)	-
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(1,815)	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառություններից մուտքեր	4,500	-
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	4,500	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	2,193	-
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	100	100
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	2,293	100

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1. Ընդհանուր տեղեկատվություն

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհետ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2009թ. դեկտեմբերի 26-ին «Աուդիտ Սրփորթ Արմենիա» անվանմամբ: 2016թ. դեկտեմբերի 14-ին Ընկերությունը վերանվանվել է «Աուդիտ Սրփորթ» ՓԲԸ, իսկ 2021թ. հուլիսի 16-ին՝ «Աուդիտ Արմենիա» ՓԲԸ:
Ընկերության հիմնական գործունեությունը աուդիտորական և խորհրդատվական ծառայությունների մատուցումն է:
Ընկերությունը ՀՀ Ֆինանսների նախարարությունից աուդիտորական ծառայությունների լիցենզիա է ստացել 2010թ. մարտի 11-ին: 2021թ. սեպտեմբերի 24-ին գրանցվել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի ռեեստրում՝ Պալատի խորհրդի թիվ 57-Ա որոշմամբ: Ռեեստրի հիմնական գրանցման գրառման համարն է՝ 1 21 0631:
Ընկերության բաժնետերն է որակավորված աուդիտոր Աննա Ավետիսյանը:

2021թ. Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 4 մարդ:
Ընկերության հասցեն է՝ 0012, Հայաստանի Հանրապետություն, Արաբկիր, Ք. Երևան, Վաղարշյան 12:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրած հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Դրանք կիրառվել են ներկայացված ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:
Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը:
Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են չափման սկզբնական արժեքի հիման վրա:

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների օգտագործում

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ("ՀՀ ԿԲ") կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը.

Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	480.14	522.59
Եվրո	542.61	641.11

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա	-	1 տարի,
Այլ հիմնական միջոցներ	-	1 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Այլ ոչ նյութական ակտիվներ	-	10 տարի:

3.4 Հաստույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Ավարտվածության աստիճանը գնահատվում է կատարված աշխատանքների ուսումնասիրության հիման վրա:

3.5 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնց իրական արժեքի փոփոխությունները վերագրվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

I. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, փոխառությունները:

3.6 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորմանը կամ էլ այնպիսի հոդվածի, որը ճանաչված է ուղղակիորեն սեփական կապիտալում:

4. Հիմնական միջոցներ

հազար դրամ	Համակարգչային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Ընդամնեը
Սկզբնական արժեք			
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
Ավելացում	-	-	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-
Ավելացում	903	12	915
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	903	12	915
Կուտակված մաշվածություն			
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
Տարվա ծախս	-	-	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-
Տարվա ծախս	221	12	233
2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	221	12	233
Հաշվեկշռային արժեք			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-
2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	682	-	682

5. Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	185	6
	185	6

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	2,293	100
Բանկային հաշիվներ (դրամային)	-	-
Բանկային հաշիվներ (արտարժութային)	-	-
	2,293	100

7. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը բաղկացած է 100 հատ 1,000 դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերից:

8. Փոխառություններ

Փոխառությունները ստացված են կապակցված կողմից անտոկոս, ՀՀ դրամով, չապահովված: Ենթակա են մարման փոխատուի կողմից պահանջ ներկայացնելուց մեկ տարվա ընթացքում և արտացոլված են չզեղչված՝ անվանական արժեքով:

9. Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	79	-
Ստացված կանխավճարներ	2,680	-
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	92	-
Աշխատավարձի գծով պարտք	-	-
	2,851	-

10. Վարչական ծախսեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցների հատուցումներ	1,710	-
Մաշվածություն և ամորտիզացիա	266	-
Գործուղման ծախսեր	120	-
Բանկային ծախսեր	18	-
Խորհրդատվական և հաշվապահական ծախսեր	50	-
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	641	-
Այլ ծախսեր	625	-
	3,430	-

11. Ֆինանսական գործիքներ

11.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

11.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,293	-
	2,293	-

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Ստացված փոխառություններ	4,500	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	79	-

	4,579	-

12. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

12. 1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերությունը 2021թ.գործարքները իրականացրել է հայկական դրամով:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

13. Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

14. Պայմանական պարտավորություններ

14.1 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Տնտեսական անբարենպաստ պայմանները և ներդրումների ցածր մակարդակը բացատրվում են նաև 2020թ.-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած ռազմական բախումներով և դրանց հաջորդած հրադադարի ռեժիմի պայմանագրերով, ներքաղաքական անկայուն վիճակով և իհարկե նույն տարում ամբողջ աշխարհը ցնցած Չինաստանում բռնկված կորոնավիրուս (COVID-19) համավարակով՝ պետությունների կառավարությունների կողմից սահմանված կրկնակի արգելափակումներով:

2020թ.ի մարտի 11-ին Առողջապահության Համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հայտարարեց, որ կորոնավիրուսի տարածումը կարող է բնութագրվել որպես համավարակ: Վիրուսը զգալի ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության վրա: Կազմակերպություններն առնչվեցին կորցրած եկամուտների և խափանված մատակարարման շղթաների խնդիրների հետ: Չնայած նրան, որ

որոշ երկրներ փորձեցին մեղմացնել սահմանափակումները՝ մեղմացումները աստիճանական են եղել, և կազմակերպությունների գործունեության ընդհատման արդյունքում միլիոնավոր աշխատակիցներ կորցրեցին իրենց աշխատանքը: Համավարակը զգալի անկայունության հանգեցրեց ամբողջ աշխարհի ֆինանսական և ապրանքային շուկաները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:

Ուկրաինական հակամարտությունը նույնպես մեծ ազդեցություն կունենա ամբողջ աշխարհի վրա:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Ընկերությունը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:
Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

14.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Ընկերությունն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Ընկերությունն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

14.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

15 Գործարքներ կապակցված կողմերի միջև

15.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է բաժնետիրոջ կողմից:

15.2 Փոխկապակցված գործարքների բացահայտում

Համաձայն ՓՄԿ ՖՀՄՍ-ների «Կապակցված կողմերի բացահայտում» բաժնի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին, կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են Ընկերության ղեկավարությունը, ինչպես նաև նրանց հետ կապված անձինք:

15.3 Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար: Ընկերության կառավարչական անձնակազմը տնօրենն է:

Հազար դրամ

	2021թ.	2020թ.
Ղեկավարությանը հատուցումներ	535	-